ԿԱՐԾԻՔ

Անուշ Սուրենի Խաչիկյանի «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 143 էջ, պարունակում է 10 աղյուսակ, 4 գծապատկեր, 9 տրամագիր, 4 նկար: Գրականության ցանկով ներկայացված են 159 աշխատություններ, որոնցից 23-ը՝ հայերեն, 19-ը՝ անգլերեն, մնացածը՝ ռուսերեն լեզուներով:

Ներածությունում, ինպես հարկն է, հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և ճշգրտորեն ներկայացնում է դրա բովանդակությունը: Ի նկատի ունենալով այս հանգամանքը և այն, որ սեղմագիրը հասանելի է մանկավարժական հանրությանը, չկա անհրաժեշտություն վերարտադրելու ատենախոսության բովանդակությունը՝ բաժին առ բաժին, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մի շարք կարևոր դրվագների:

Ատենախոսության թեման՝ «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում» ներառում է երկու տարբեր, բայց փոխկապակցված բաղադրիչ: Մեկը վերաբերում է ուսուցման գործընթացում նախագրերի մեթոդի կիրառման արդյունավետության հարցին: Մյուսը՝ ուսումնական առարկայի՝ տվյալ դեպքում քիմիայի, ուսուցման ընացքում վերառարկայական կարողությունների՝ տվյալ դեպքում հետազոտական կարողությունների, զարգացման հարցին: Երկու

դեպքերում էլ ուսումնամեթոդական մշակումներն ու կիրառությունները Հայաստանի Հանապետության կրթության ոլորտում սակավ են, ինչով էլ բացատրվում է թեմայի արդիականությունը:

Նկատենք, որ ատենախոսությունն ինքը երկարաժամկետ հետազոտական նախագծի օրինակ է, որի իրականացմամբ դրսևորվել է ատենախոսի հետազոտական կարողությունների մակարդակն ու նախագծային մեթոդի տիրապետումը:

Ատենախոսության նպատակից ու վարկածից բխող խնդիրները, ըստ էության, հիմք են հանդիսացել հետազոտական աշխատանքի կառուցվածքի ու բովանդակության համար: Ընդ որում եզրակացություններն էլ ներկայացված են որպես սահմանված խնդիրների իրականացման արդյունք:

Ուշադրության է արժանի առաջին գլխի առաջին ենթավերնագրի բովանդակությունը: Իրականացված է հետաքրքիր պատմական էքսկուրս, որը թյուրիմացաբար կարող է ընկալվել որպես ավելորդ, սակայն այդ հատվածները շատ արժեքավոր են և ուսանելի: Հետաքրքրվողներին կարող եմ խորհուրդ տալ ծանոթանալու այդ ենթագլխի բովանդակությանը:

Ատենախոսության գնահատելի պահերից է այն, որ մանրակրկիտ ուսումնասիրված է մանկավարժագիտական գրականությունը և համակարգված ներկայացված է նախագծային մեթոդի էությունը և դրսևորման տեսակները:

Նմանապես ընդհանրացված և ներկայացված են հետազոտական կարողությունների հայտանիշները:

Երկրորդ գլուխը փաստորեն նվիրված է ատենախոսության նպատակի իրականացմանը:

Աշխատանքում ատենախոսի կողմից մշակված և կիրառված մոդելը ներկայացված է մանրամասն՝ հիմնավորումներով, նկարագրությամբ և օրինակներով: Մոդուլի կիրառման արդյունավետության վերլուծությունը կատարվել է մանրակրկիտ: Աշխատանքն ունի արժեքավոր գործնական արդյունք, ուժեղ փորձարարական եզրահանգումներ:

Նկատենք մի շատ կարևոր հանգամանք: Ատենախոսը համապատասխան հարցերի վերաբերյալ ոչ միայն ներկայացնում է բազմաթիվ մասնագետների մոտեցումները, այլև մատնանշում է սեփական դիրքորոշումն ու եզրահանգումը: Ատենախոսությունում այդ նկատվում է գրեթե բոլոր ենթավերնագրերում:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտարկումներ.

1. Անկասկած նախագծային մեթոդի կիրառմամբ հնարավոր է սովորողների մոտ ձևավորել որոշակի վերառարկայական կարողություններ, մասնավորաբար նաև հետազոտական կարողունակություններ: Սակայն աշխատանքը կշահեր, եթե քննարկվեր նաև նախագծային մեթոդի կիրառման անհրաժեշտության ու անխուսափելիության հարցը: Այլ կերպ ասած՝ ինչու ավանդական պարապմունքները օբյեկտիվորեն նպաստավոր չեն հետազոտական կարողունակությունների զարգացման համար:
2. Մեղմ ասած, ոչ ճիշտ է օգտագործված «ուսուցման կոլեկտիվ եղանակ» եզրույթը: Տեքստից պարզ է դառնում, որ խոսքը ընդամենը վերաբերում է փոփոխական կազմով զույգային աշխատաձևին: Սակայն կոլեկտիվ ուսումնական պարապմունքները, առավել ևս ուսուցման կոլեկտիվ եղանակը, անհամեմատ ավելի լայն հասկացություններ են:
3. Երկրորդ գլխում բերված օրինակները նախագծային մեթոդի երկարաժամկետ տեսակներից են և բնականաբար իրականացվում են որպես արտադասարանային պարապմունքներ: Կարևոր է նշել, թե դասագործընթացում կիրառվող նախագծային մեթոդի հատկապես որ տեսակներն են ավելի նպատակահարմար և հնարավոր:
4. Ինչպես նշում է ատենախոսը .փորձարարական աշխատանքների ընթացքում, բացի նախագծերի մեթոդից կիրառվել են բազմաթիվ փոխներգործուն մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: Ընդ որում, ինչպես նկատելի է, ատենախոսը տիրապետում է բավականին հարուստ մեթոդական արսենալի: Սակայն պարզ չէ, թե նմանատիպ դասագործընթացների արդյունավետությունը որքանով է պայմանավորված հենց նախագծերի մեթոդի կիրառմամբ:

5. Թույլ տանք նկատելու որոշ ոչ բովանդակային վրիպումներ: Օրինակ, մի կողմից նշված են մի շարք հեղինակների աշխատություններ, որոնք ներկայացված են որպես հետազոտության մեթոդաբանական հիմք,

մյուս կողմից՝ նրանցից որոշ մասը ընդհանրապես ներառված չի գրականության ցանկում: Կամ օրինակ 41 և 42 համարների տակ միևնույն աշխատությունն է:

Այսուհանդերձ, ատենախոսը կատարել է հանրակրթության ոլորտի բարեփոխմանը նպաստող օգտակար աշխատանք՝ հանդես գալով որպես գիտահետազոտական ունակություններով օժտված մասնագետ:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով: Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի հրապարակումներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սուրենի Խաչիկյանի «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մկրտչյան

Մ. Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ. Թադևոսյան
09.09.2026թ.